ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 78 - Ա

«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ՍՈԹՔՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 235,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Բնակելի տների վերակառուցում Սոթքում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տեքս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00474265) 2022 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N 3011-2022 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքների և պատերի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 110,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03019924) 2022 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N ՄԿ-ՏԲ-01/11/22 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների մատակարարում՝ 119,999,541.67 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մաստեր Սիթի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00492798) 2022 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N 30112022-01 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի, պիտույքների և պարագաների մատակարարում՝ 4,905,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

02.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ